

որպէս զի Ան իր անդրանիկը ընդունի իբր երախայրիք պատարագի: Ըսելով զայս ազգեց անոր իր Աստուածութեան պատիւը՝ հասկցնելով թէ Բանն Աստուծոյ է, Անորմէ ծնած ու իր երկնային օթոռոյն ժառանգ, եւ ոչ միայն իրմէ ծնեալ, իբր մարմին երկրային, Դաւթի ցեղէն: Ըսելով զայս աշակերտներուն մօտ զրկեց զանիկա: Ս. Կոյսը՝ Մարիամ Մագդաղենացիին հետ առաքելոց մօտ եկաւ և պատմեց անոնց թէ ինչ պէս Տէրը տեսաւ և խօսեցաւ»։ (Հաւ. էջ 100-102):

4. — Քրիստոսի վարժամակը եւ Ս. կառները Ս. Գերեզմանին մեջ. — Ս. Եպիփան իր «Յաղագս Յարութեան Քրիստոսի եւ խնկարեւ կանանց» յիշեալ ճառին մէջ կը յիշատակէ հետեւեալ աւանդութիւնը. «Աստուածամայրը Քրիստոսի վարչամակը եւ սուրբ կրտաւները մեծ զգուշութեամբ մը մօտը պահեց մինչեւ իր մահը: Իր ննջումէն առաջ զանոնք յանձնեց Յովհաննէս Աւետարանչին, որպէս իր որդիին, Տիրոջը հրամանին համաձայն, ինչպէս գրուած է. «ահա մայրքո», մօր և հօր կողմէ ալ ըստ մարմնոյ մերձաւոր ազգական, ինչպէս կը սորվինք պատմութենէն: Աւետարանիչը զանոնք ամէնքն ալ առնելով՝ մեծ զգուշութեամբ կ'սպասուորէր մինչև իր մահը: Յետոյ իր աշակերտներուն յանձնեց զանոնք և անոնք ալ՝ փոխանորդներուն, մինչեւ մեծն Կոստանդիանոս, որ Աւետարանչին Աթոռը Եփեսոսէն փոխադրեց թագաւորեալ քաղաքը և հրամայեց բերել Քրիստոսի վարչամակը, նաև խանձարուրքը, տղայութեան պահուած հանդերձները, օսկի մատանին և մոգերուն իբր ընծայ բերուած զմուռսէն և կնդրուկէն մաս մը: Կոստանդիանոս թագաւորը զանոնք իր ձեռքը առնելով խան-